ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

N ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-1
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «18» ապրիլի 2025թ.

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ**-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս գործադիր տնօրեն Արթուր Մկրտչյանի, հիմք ընդունելով 25.03.2025 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-1** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.13 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-1** ծածկագրով պայմանագրի 4.1 կետով սահմանված **783 000** (յոթ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամի վճարումը, որի վճարումը Պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»Ապահովագրական ՓԲԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ՀՀ, ք. Երևան, 0014, Կոմիտաս 62$_2$,**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**93-93/1 առանձ**
գործառնական վարչություն	**Բանկ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900011042471	**Հ/Հ 24100024283401**
ՀՎՀՀ 02882913	**ՀՎՀՀ 02706942**
Հեռ. 010 59-61-52	**Հեռ: (+374 60) 50 57 57**
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	**Էլ. Փոստ:** info@regoinsurance.am
Ա. Ֆիդանյան	**Ա.Մկրտչյան**
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /	**«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»Ապահովագրական ՓԲԸ**
(ստորագրություն)	**Գործադիր տնօրեն**
Կ.Տ	**(ստորագրություն)**
	Կ.Տ

Հավելված N 1
«25» մարտի 2025թ. կնքված
ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Ա-56-1 ծածկագրով
գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

Վճարման ժամանակացույց

Ծառայության դրամ՝ ՀՀ														
Տարիների ընթացքում նախատեսված միջոցների չափաքաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	CPV- 66511180/502	Ապահովագրական ծախսեր «ԱՊՊԱ»							391 500	391 500	391 500	783 000	783 000	783 000	**783 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ներքին գործերի նախարարություն
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն՝
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_____ Ա. Ֆիդանյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»Ապահովագրական ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0014, Կոմիտաս 62$_2$,
93-93/1 տարածք
Բանկ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 24100024283401
ՀՎՀՀ 02706942
Հեռ: (+374 60) 50 57 57
Էլ. Փոստ: info@regoinsurance.am

_____ Ա.Մկրտչյան
«ՌԵԳՈ ԻՆՇՈՒՐԱՆՍ»Ապահովագրական ՓԲԸ
Գործադիր տնօրեն
(ստորագրություն)
Կ.Տ